ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 06 » մայիս 2025թ. No 2773 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 47-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/2086-25 առ 02.05.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել թվով 5 դեղի գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգումը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի հավաստագրի ժամկետի երկարաձգման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Invalid signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի մայիսի «06 » - ի N 2773- Ա հրամանի

Գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգման դեղերի ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն առ 28.02.2019 որոշման

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ | Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՄԵՏՐՈՆԻԴԱԶՈԼ-ԱՍՏԵՐԻԱ | մետրոնիդազոլ | դեղահատեր | 500մգ; (30/3x10/) բլիստերում | Հանկուկ Կորուս Ֆարմ Քո., ՍՊԸ, 30, Գանգջեռ-ռո, Ջեչեոն-Սի, Չունգչեոնգբուկ-դո | Կորեայի Հանրապետություն | Աստերիա ՍՊԸ, Նաիրի Զարյան 72/3 փ., 0051 Երևան | Հայաստանի Հանրապետություն | Դ | 23012 30.04.2025 | 15.04.2025 |
| 2 | Բետայոդին | պովիդոն յոդ | նրբաքսուք | 100մգ/գ; 15գ ալյումինե պարկուճ, 20գ ալյումինե պարկուճ | Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, տուն 19 | Հայաստանի Հանրապետություն | Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, տուն 19 | Հայաստանի Հանրապետություն | ԱԴ | 23013 30.04.2025 | 17.12.2024 |
| 3 | Կո-Պրենեսա | պերինդոպրիլ (պերինդոպրիլ էրբուտամին), ինդապամիդ | դեղահատեր | 8մգ+2,5մգ; (30/3x10/) բլիստերում | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | Դ | 23014 30.04.2025 | 16.05.2025 |
| 4 | Ֆլուիմուցիլ | ացետիլցիստեին | դեղահատեր դյուրալույծ | 600մգ; (10/5x2/) բլիստերում | Զամբոն Սուիտզերլանդ ՍՊԸ, Վիա Ինդաստրիա 13, ՍՀ-6814, Կադեմպինո | Շվեյցարիա | Զամբոն Ս.Պ.Ա., Վիա Լիլո Դել Դուկա, 10, Բրեսո, 20091 | Իտալիա | ԱԴ | 23015 30.04.2025 | 19.06.2025 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Մոնուրալ | ֆոսֆոմիցին (ֆոսֆոմիցինի տրոմետամոլ) | գրանուլներ ներքին ընդունման լուծույթի | 3գ; (1) փաթեթիկ 8գ, (2) փաթեթիկներ 8գ | Զամբոն Սուիտզերլանդ ՍՊԸ, Վիա Ինդաստրիա 13, ՍՀ-6814, Կադեմպինո | Շվեյցարիա | Զամբոն Ս.Պ.Ա., Վիա Լիլո Դել Դուկա, 10, Բրեսո, 20091 | Իտալիա | Դ | 23016 30.04.2025 | 30.06.2025 |